

Ա.Ս.Ծ.Խ.Զ-Ի Ժ.Գ.Խ-ԻՆ ԿԻՑ ՄԹԵՐՄԱՆ
ԿՈՄԻՏԵ

ՇԱԳԱՆԱԿՆ ԱՆԴՐԿՈՎ-
ԿԱՍԻ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ

ՅԵՎ

ՆՐԱ ՊՏՈՒՂՆԵՐԻ
ՍՆՆԴԱՅԻՆ ՆՇԱՆԱ-
ԿՈՒԹՅՈՒՆԸ

634.5

ւո-92

Կ.Դ.

30 JUL 2010

Апр.

3-1764

ԱՍՖԻՆԶ ԺՈՂԿՈՄԻՏԻՆ ԿԻՑ ՄՅԵՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ

634.5

S-92

Վ. Ն. ՏՈՒՆՅԵՎ

117

Շ Ա Գ Ա Ն Ա Կ Ը

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ

Յ Ե Վ

ՆՐԱ ՊՏՈՒՂՆԵՐԻ ՄՆՆԴԱՅԻՆ

ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Անտառային ֆինանսական» —
գործարարական կազմակերպություն
ՎԻՆԱԳՐԱԴՈՎ - ՆԻԿԻՏԻՆ

ИЧВ. № 6337



ԹԻՖԼԻՍ
1935

10 OCT 2019

20.006

148008-5



39960-63

Պատասխ. խմբ. Հ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ.

Տեխ. խմբ. Ի. Ի. ՏՐՈՒՖԱՆՈՎ.

Թարգմ. Ս. ՄԱՆՈՒԿՈՂՅԱՆ:

Տպարան «Տեխնիկա դա Շրոմա» Կեցխովիկի փ. № 5.

Պատվեր 822.

Գլավլիտ № 1329

Տիրաժ 2150

Ծ Ա Գ Ա Ն Ա Կ Ը

ԱՆԴՐԿՈՎԱՍԻ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՆՐԱ ՊՏՈՒՂՆԵՐԻ ՄՆՆԴԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

I. Ժողովրդական տնտեսության մեջ շագանակի պտուղների ունեցած նշանակությունը

Շագանակի պտուղները շատ սննդալից են. ունեն դուրեկան համ, և շատ յերկրներում սննդատուության համար ունեն մեծ նշանակություն:

Շագանակների հիանալի սննդային հատկությունը մարդկության կողմից գնահատված և դեռ իր նոր զարգացման ժամանակաշրջանից: Ներկայումս զգալիորեն մեծացել և ուշադրությունը դեպի շագանակը և այն, վորպես պտղատու ծառ լայն կերպով մշակվում և օգտագործվում է հարավում և Ամերիկայում: Վորպես պտղատու ծառ առանձնապես շատ են զարգացնում-տարածում շագանակը Իտալիայում և Ֆրանսիայում: Շագանակի անտառներից կուտուրական դրուժյան դարձրած և արհեստական կերպով տնկած պտղատու շագանակենու տարածությունը Ֆրանսիայում հասնում է 300 հազար հեկտարի: Այդ յերկրըրը ամեն տարի արտահանում է ուրիշ յերկրներ շագանակի պտղային արտադրանք վերամշակված ձևով մինչև 2000,000 ֆրանկի վոսկով: Իտալիայի, և նույնիսկ Տաճկաստանի անտառային շագանակի շատ հողամասեր խնամելով դարձրել են շագանակի անտառային գրիներ:

Տաճկաստանը նույնպես զգալի քանակությամբ շահադուրծում է շագանակի պտղի արտադրանքը ալյուրի ձևով, թեև Տաճ-

կաստանի շագանակի հիմնական շրջաններն ավելի թուլալուծ են, քան թե որինակ Աբխազիայի, Մինգրելիայի և այլ տեղերինը:

Անդրկովկասում, գլխավորապես Վրաստանում և մասնակի Ադրբեջանում շագանակենին առանց վորեկ խնամքի տալիս և բավականաչափ պտղաբերք, բայց նրանց ոգտագործելը սահմանափակվում է միայն տեղական գործածությամբ: Շագանակի հավաք արդյունաբերական նպատակով առ այժմ չի կատարվում. պատճառը կայանում է նրանում, վոր շագանակի պտուղներն իրենց մեջ պարունակում են մեծ քանակությամբ խոնավություն և պահանջում են նախնական չորացում ու կանոնավոր պահել, առանց վորի շատ շուտ փչանում են:

Շագանակի պտուղները կարող են ոգտագործվել շագանակային ալյուր պատրաստելու, թեյ-սուրճի արդյունաբերության համար, նույնպես և լայն կերպով հրուշագործական արտադրության մեջ գործածելու համար (շաքարած շագանակներ և այլն): Վերջապես շագանակը կարող է ոգտագործվել բնակչության կողմից հում դրությամբ, յեփած և խորոված ձևով (բորված):

Համաձայն Մենդի Արդյունաբերության Գիտական Հետազոտական Ինստիտուտի անալիզի, շագանակի պտուղներն այլ նյութերի հետ միասին, իրենց մեջ պարունակում են՝ յուղամասեր—2,84, սպիրտակուց—5,98, շաքար—9,78, ուլա—23,76 տոկոս: Պտուղների թթվությունն է—1,04⁰/₁₀, Դա ցույց է տալիս շագանակի սննդարարության բարձր հատկությունը:

II. Շագանակի արածվելը

Շագանակի ծառը հասնում է հսկայական մեծության. նրա բարձրությունը յերբեմն հասնում է մինչև 30 մետրի, բունի տրամագիծը 1 մետրի: Շագանակի անտառների բունած ընդհանուր հողամասը ԽՍՀՄ-ում կազմում է մոտավորապես 40—75 հազար հեկտար: Դրա թվում 12 հազար հեկտար Հյուսիսային Կովկասում և 30 հազար հեկտար Անդրկովկասում: Բացի դրանից, այլ տեսակի անտառները խառը դրությամբ իրենց մեջ պարունակում են մոտ 40.000 հեկտար շագանակ: Շագանակի գլխավոր հոծություններն ընկած են Աբխազիայում—Կոտոր գետի հոսանքի ուղղությամբ, Ջամպալում, Ամտկոլայում, Կիլասուրիում և Գումիստիում, նույնպես և Ոչեմչիրի մոտերքում:

Մինգրելիայում շագանակն հայտնի յե Մուխուրի, Պախուլանո-Ջվարի անտառային դաշաներում 7000 հեկտար տարածության վրա: Աջարիստանում և Վրաստանի մի քանի անտառարդյունաբերական տնտեսություններում նույնպես կա, միայն յուրաքանչյուրում մի քանի հեկտար շագանակի ծառեր:

Խառը դրությամբ կա շագանակ՝ Կախեթիայի, Ջաքաթալայի, Կախի, Վարդաշանի և Կուտկաշենի շրջաններում (ԱՍԽՀ):

Շագանակի անտառներն Անդրկովկասում տարածված են գլխավորապես 300 մինչև 1200 մետր ծովի մակերևույթից բարձրություն ունեցող շերտերում: Շագանակի աճման և զարգացման ամենալավ պայմանները գտնվում են մինչև 800 մետր ծովի մակերևույթից բարձր պարարտ, խոր հողաշերտով և բավականաչափ խոնավություն պարունակող տեղերում: Սակայն Մինգրելիայում—հարավային թեքվածքներում կան շագանակի լավ հողամասեր քարքարոտ, փխրուն հողով:

Շագանակը ծաղկում է հուլիս ամսին: Արևելյան Անդրկովկասում պտուղներն հասնում են սկսած սեպտեմբերի վերջերից մինչև հոկտեմբերի կեսերը, իսկ Արևմտյան Անդրկովկասում—հոկտեմբերի կեսերից մինչև նոյեմբերի սկիզբը:

Շագանակի պտուղները—կակալը փակված են լինում Ձառան, շատ քիչ դեպքում Յառան փշոտ պատեճների մեջ: Հասունանալուց հետո ծառից պատեճների հետ միասին վայր են ընկնում. մի քանի ժամանակից հետո չորանալով պատեճներն արդեն գետնի վրա բացվում են և շագանակները միջից դուրս ընկնում:

ԱՍԽԾՀ շագանակների բնորոշ հատկությունն է, վոր շատ շուտ են յենթարկվում փչացման, յեթե իհարկե նրանց պահելու համար ձեռք չի առնված բացիոնալ (այսինքն գիտականորեն մշակված) միջոցառումներ, վորոնց բացակայության կամ անբավարարության դեպքում, մթերումն հանդիպում է անհաջողության:

Պտղաբեր է շագանակի ծառի գագաթի այն մասը, վորը լուսավորվում է արևից. դրա համար ել խիտ անտառներում բուսնող ծառերը պտղաբեր են միայն իրենց գագաթի վերին մասով, իսկ այն ծառերը, վորոնք բուսնում են ազատ, բաց տեղերում, նրանք պտղաբեր են ամբողջ գագաթով, Բերքաբեր տարիներում անտառում, խիտ ծառերով շրջապատված շագանակենին, համեմատած ավելի ցանցառ ծառերով շրջապատված նույն մեծության շագանակենու հետ 8—15 անգամ պակաս բերքաբեր է:

Միջին բերքատվության դեպքում, շագանակի կակալները ամբողջ արտադրարժեքը ԱՍԽՖՀ-ում վերողջվում է մինչև 20.000 տոնն, իսկ բերքաբեր տարիներում այն 2—3 անգամ ավելի յե լինում:

Բացի դրանից, կուլտուրական (մշակման յենթակա) հողում գտնված շագանակի բերքը հասնում է 2.200 տոննի. (զրա թը վում—1900 տոնն կուտակաշենի, և 300 տոնն վարդաշենի, Նու խու, Կախի, Զաքաթալի և Բելոքանի շրջաններում): Անդրկովկասի մյուս շրջաններում շագանակ հազվադեպ պատահում է այդի ներում:

Ավելի քիչ քանակությամբ շագանակենու կարելի յե հան դիպել Հյուսիսային Կովկասի Սև ծովի ափերում: Միության մյուս շրջաններում և վայրերում շագանակի անտառներ վոչ մի տեղ չկա:

III. Շագանակների հավաքն ու պահելը

Անտառներում շագանակի հավաքը կատարվում է գետնից, յերբ շագանակները պատեճներով ընկել և վերջիններն արդեն բացվել ու շագանակները դուրս են թափվել:

Հավաքած շագանակները լցնում են պարկերը կամ դամբյուղները և այդ ձևով բերում ընդունող կետը:

Վերովհետև հավաքի ժամանակ բոլոր պատեճները բացված չեն լինում, սովորաբար այդ դեպքում նրանց հավաքում են կուլտերով: Մի քանի որ նման կուլտերով մնալուց հետո պատեճները բացվում են և շագանակները միջից դուրս ընկնում:

Շագանակը կուլտերով կամ պարկերով պահել չի կարելի, վերովհետև նրանք արագ կերպով տաքանում են, քրտնում, բորբոսնում և կարող են բոլորովին անպեռքանալ:

Շագանակն հավաքելիս առանձնապես մեծ նշանակություն ունի բրիգադների աշխատանքը:

Շագանակի պտուղների հավաքը բրիգադների միջոցով ունի հետևյալ առավելությունը:

1) Անտառային յուրաքանչյուր շագանակային հողամասի պետք է կցել վորոշ բրիգադ:

2) Հավաքի ամբողջ ընթացքի ժամանակ յուրաքանչյուր բրիգադում կարելի յե կազմել հատուկ նարյադ, վորի մեջ ճշտությամբ վորոշվում է յուրաքանչյուր օրվա համար ամեն մի հավաքողի աշխատանքի ծախսը և նրա տեխնիկան: Դրանով կարե-

լի յե հասնել թե շագանակի հավաքի և թե հավաքողի աշխատանքի զգալիորեն բարձրացմանը:

Բրիգադային ձևով հավաքը կազմակերպելիս --պայմանով, վոր միջին բերքն ամբողջապես յուրացվի շագանակը թափվելու ժամանակի ընթացքում, վոր աևում է մոտավորապես 3 շաբաթ--աշխատանքային մեկ օրվա ընթացքում կարելի յե ընդունել հավաքի քանակությունը 40—50 կիլոգրամ:

IV. Չորացնելը յեվ վերամշակելը

Բավականին զգալի չափով խոնավություն պարունակելու և զանազան սնկիկներով վարակվելուն յենթակա լինելու պատճառով, առանձնապես թարմ ողի հոսանքի քչության դեպքում, սովորաբար շագանակի պտուղները յենթարկվում են փշանալուն (փթում են): Դրա համար ել առանց նախնական չորացման նըրանց պահելը և մի տեղից մյուսը մեծ քանակությամբ տեղափոխելը, առանձնապես հեռու տեղերը, շատ վտանգավոր է:

Մեծ կուլտերով իրար վրա լցված շագանակները թարմ ողի բավականաչափ հոսանքի բացակայության դեպքում, արագ կերպով տաքանում են, ծածկվում բորբոսով և մզլում: Վորպեսզի բորբոսնելուց խույս արվի պետք է այն բարակ շերտով—10—20 սանտիմետր հաստությամբ փռել արևի տակ, այնպես վոր, ողը բավականաչափ լինի:

Նույնպես պետք է շագանակը իսկույն փռել արևի տակ, յեթե այն հավաքած է անձրևից հետո կամ խոնավ գետնից: Դրա համար ել ընդհանրապես հավաքած ամբողջ շագանակը առանց հետաձգելու պետք է յենթարկել արագ կերպով չորացման և ողհարման: Չոր յեղանակներին հավաքած շագանակը կարելի յե փռել բարակ շերտով ողափոխվող սենյակում ամեն օր շարունակաբար շուտ ու մուտ ապրով:

Այն դեպքում, յերբ շագանակը անմիջականորեն տարվում է սննդի համար թարմ, յեփած և բորված դրությամբ, այդ դեպքում կարելի յե ավելի քիչ չափով չորացնել, այսինքն այնքան, վոր կորցնի իր մեջ պարունակող խոնավության 8—15%-ը:

Իսկ յեթե շագանակն հատկացված է արդյունաբերության մեջ ոգտագործելու համար, կամ հեռավոր ճանապարհ պիտի տանել, այդ դեպքում շագանակը պետք է բոլորովին չորացնել:

Միայն այդ ժամանակ շագանակը կարող է պահվել անորոշ
յերկար ժամանակ և տեղափոխելու կամ պահելու դեպքում ար-
դեն չի փչանա:

Կախված նրանից, թե շագանակներն ինչ նպատակի հա-
մար պիտի ոգտագործվեն, նրա հավաքն ու պահելն ել պիտի կա-
տարել տարբեր ձևերով:

V. Ինչպես փավաֆել ու պահել ռազանակը թաւմ դրու-
թյամբ յերկար ժամանակ

(Սպառողական նպատակով կամ արդյունաբերութեան մեջ
ոգտագործելու համար)

Նման դեպքերում անհրաժեշտ է իսկույն, 1—2 որվա ըն-
թացքում հավաքած շագանակը չորացնել արեւի տակ կամ ողա-
փոխման լավ յինթակա շենքում (որինակ՝ ծածկոցների տակ):
Շագանակը նախնական չորացումից հետո, ցանկալի յե այն մա-
ղել մետաղե ցանցով (ցանցի լարերի միջի տարածութեանը ա-
նում են 10—12 միլիմետր): Ցանցով մաղելու դեպքում, շագանա-
կի կճեպի վրայից հեռանում է մազային ծածկոցը, վորի հեռաց-
նելով բավական հեշտանում է պտուղները կիտված դրութեամբ
պահելը: Միաժամանակ մաղելու դեպքում ցանցից անցնում և
դուրս են ընկնում մանր, լավ չզարգացած շագանակները և աղ-
բը, վորը բարձրացնում է ապրանքի վորակը:

Չորացնելն ու մաղելը թույլ են տալիս շագանակը պահել
ձմեռային պահեստում կամ թե տեղափոխել սպառման տեղերը:

Անմիջականորեն դործածելու նպատակով նրանց պահելու
համար շագանակների ձմեռային պահեստը պետք է լինի չոր և
լավ ողափոխման յինթակա և ունենա զերոյից մի քիչ բարձր
ջերմութեան աստիճան, ալիլի լավ է 1-ից մինչև 5° ջերմու-
թեանը: Անհրաժեշտ է հետեւել, վորպեսզի շենքի մեջ չանցնի
բորբոսը կամ այլ վարակիչ հիվանդութեան և առաջ չգա շագա-
նակների ինքնատաքացումը: Պահվող շագանակը պետք է շարու-
նակաբար մի քանի որը մեկ անգամ տակ ու վրա անել:

Շագանակը փչանալուց և հիվանդանալուց պաշտպանելու
համար բավականին տարածված ամենաճիշտ միջոցը կայանում է
նրա կաղինները յեռացրած ջրով խաշելու մեջ: Դրա համար պը-

տուղները լցնում են կիսատակառների մեջ, վրան լցնում յեռա-
ջուրը, խառնում և հանում, վորից հետո պահում են սառը տեղում:

VI. Ինչպես փավաֆել յեվ պահել ռազանակի կակալները
առանց կորցնելու նրանց ծելու ընդունակութեանը հե-
սեվյալ սարին գաւնանը ցանելու համար.

Սերմի համար շագանակը պետք է հավաքել հետեյալ պայ-
մանները պահպանելով.

ա) Պտուղները պետք է լինեն հասած, խոշոր, միանգամայն
զարգացած, լիակշիւ, բոլորովին առողջ, կճեպի վրա առանց ծա-
կերի, առանց խիլերի, այնպես անել, վոր հավաքի և տեղափոխ-
ման ժամանակ ճանապարհին չբորբոսնին:

բ) Սերմերի հավաքն սկսվում է շագանակի բնականորեն
թափվելն սկսվելուց 8—15 որ հետո, Հավաքի ժամանակ ալիլի
լավ է վերցնել այն շագանակները, վորոնք ընկել են պատեճնե-
րով: հնարավոր է նաև թույլ, թեթեւ թափահարում (ծառի), բայց
թափ տալու ժամանակ յերբեք չի կարելի դիմել ձողափայտերի
ողնութեանը, վորովհետեւ առանց պատեճի ծառից ընկած կամ
ձողափայտով հարված ստացած շագանակը, պահելու համար դի-
մացելուն չէ:

գ) Կակալներն հավաքելուց հետո հարկավոր է իսկույն և
յետ խնամքով վերեւից չորացնել:

Սերմի համար հավաքած շագանակը վոչ մի դեպքում թույլ
չի տրվում յեռաջրով խաշել, վորպեսզի խույս տրվի նրանց ծի-
լու ընդունակութեանը կորցնելուց:

դ) Շագանակը չորացնելուց հետո, նրանց դնում են պահես-
տը, վորտեղ պետք է նրանք մնան մինչև դարնանային ցանքսի
ժամանակը:

Սերմացու շագանակի ձմեռային պահեստը պետք է ունենա
զերոյից մի քիչ բարձր ջերմութեան, վորովհետեւ 0°-ից ցածր
ջերմութեան դեպքում շագանակները կարող են սառչել, իսկ 5°-ից
բարձր տաքութեան դեպքում—կորցնել իրենց միջի խոնավու-
թեանը (չորանալ), յերկու դեպքում և կկորցնեն իրենց ծելու
ընդունակութեանը: Շենքը պետք է չափավոր կերպով ողափոխվի:

Անհրաժեշտ է հետեւել, վորպեսզի շագանակները ինքնատա-
քացման չյինթարկվեն, նույնպես և չվաքակվեն բորբոսով կամ
այլ հիվանդութեաններով:

VII. Շագանակի կակալները յերկար ժամանակ պահելու համար ամենամիշտ միջոցն է չորացնելը.

Չորացրած շագանակն ավելի եփան է զնահատվում, քան թե թարմը. բայց դրա փոխարեն, առաջինն ավելի հեշտ է պահելը, մեկ ել, շագանակի ալյուր, ձավար և այլ մթերքներ պատրաստելու համար, նա հանդիսանում է կիսաֆաբրիկատ:

Շագանակը չորացնելու համար ամենահասարակ ձևն է—փրփռել նրան բարակ շերտով ծածկոցների տակ, ամբարներում կամ թե վորևե ուրիշ չոր, լավ ողափոխման յենթակա շենքերում, վորտեղ շագանակը գոլորշիացնում է իրեն մեջ պարունակող խոնավության ավելցուկը:

Այդ ձևը բավականին յերկար է տևում, ուշիմ աշխատանք է պահանջում և հումութի մեծաքանակության դեպքում քիչ ընդունելի է. դրա համար ել, մթերողները պետք է աշխատեն կրակով չորացնելու ուղղությամբ:

Ամենահարմար ու բացիոնալ ձևը պետք է համարել թուներ լային տիպի չորանոցը, Սիմպլեկս-Գանգեյգեյի ապպարատը կալորիֆերով, կամ թե մեծ արտադրողականություն ունեցող ուրիշ սխեմաներ, վորպեսզի դժվար պահվող շագանակների չորացումը չձգձգվի յերկար ժամանակ:

Միանգամայն պետքական են նաև պահարանոցային ձևով սովորական չորանոցները: Շագանակի չորացման գործը հեշտացնում է այն հանգամանքը, վոր այն մշակման է բերվում բավականին ուշ, յերբ արդեն մյուս մթերված պտուղները չորացված են, և յերբ չորացնող ապպարատներն ազար են: Սակայն, շագանակների նախնական վերամշակման համար կատարելագործված մեքենայացումով չորանոցներն ոգտագործել թույլ է տրվում այն դեպքում, յերբ այդ նպատակով ոգտագործվում են ունեցած պատրաստի չորանոցները (պտղային ուրիշ հումութով աշխատող), վորոնք մոտ են գտնվում շագանակի անտառին:

Շատ դեպքերում շագանակի նախնական չորացումը պետք է կատարվի պարզացրած, կուստար ձևի չորանոցներում (լավացրած ծխաններ): Այդ եփան կահավորումը պետք է գտնվի անմիջապես շագանակի անտառամասերին մոտ:

Մինչև չորացումը, պետք է շագանակները խնամքով պահվեն չոր, լավ ողափոխվող շենքերում, 20 սանտիմետր հաստու-

թյամբ շերտերով փռված. յուրաքանչյուր 1—2 որը մեկ անգամ պետք է այն շուտ տալ, տակ ու վրա անելով:

Տեղափոխությունը.—Լավ չորացված և արդյունաբերական նպատակի համար հատկացված շագանակները կարելի է տեղափոխել հեռու տեղեր ամեն տեսակի տարայով՝ պարկով, արկղ-ների մեջ, և նույն իսկ հենց այնպես լցրած փակ վազոններում: Միայն անհրաժեշտ է թույլ չտալ թացանալու անձրևից կամ խոնավությունից, ինչպես սլահելու, նույնպես և տեղափոխելու ժամանակ:

Թանձ դրությամբ գործածելու համար հատկացված շագանակների փոխադրությունը, խույս տալու համար վորպեսզի նըրանք չփչանան, պետք է կատարել վորոշ նախազգուշական միջոցներ ձեռք առնելով:

Այդպիսի շագանակները տեղափոխելու համար ամենալավ տարան պետք է համարել ողափոխման համար անցքեր ունեցող արկղները 30—40 կիլո տարողությամբ: Տաք յեղանակներին յերկար տարածություն տեղափոխելը պետք է կատարել վազոն-սառցարաններով, իսկ կարճ ճանապարհ տանելու դեպքում (վոչ ավել 5 որվա ճանապարհից) թույլ է տրվում լցնել յերկու փթանոց պարկերի մեջ: Տեղ հասնելուն պես, պետք է շագանակը իսկույն փռել բարակ շերտով սառը, լավ ողափոխման յենթակա շենքերում:

ՇԱԳԱՆԱԿԻ ԱՆՏԱՌԱՊՏՂԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շագանակային հոծություններում անտառապտղային տնտեսությունների կազմակերպությունը կարելի չէ հեշտությամբ միացնել նրանց փայտի շահագործման-մշակման հետ:

Այդ նպատակի համար շագանակի անտառներում հատկացվում է ավելի մատչելի և միջին հասակ ունեցող հողամասերը, վորոնք աչքի չեն ընկնում պտուղների բարձր վորակով: Այդ հողամասերում ընտրում են լավագույն պտղատու շագանակներինը, վորոնք հողամասում տարածված են հավասարաչափ 100—120 ծառի քանակությամբ մեկ հեկտարում: Այդ ծառերը համարվում են անտառապտղային տնտեսություն հիմքը և պետք է բոլորովին առողջ լինեն, իսկ վոր գլխավորն է, պետք է ունենան լավ զարգացած, կարող և պտղառատ գագաթ: Հողամասում գտնված բոլոր ֆացած ծառերը, ինչպես ուրիշ տեսակի, նույնպես և շագանակի, պետք է կտրվեն, վորպեսզի պտղատու ծառերի համար լավացվի լուսավորման, խոնավության նույնպես և սննդառություն պայմանները և զբանով բարձրացվի նրանց հետագա պրտղաբերությունը: Պետք է նույնպես վերացվեն թփիկներն ու մանրածառ անտառը, վորոնք զգալաբանում են գետնին թափված շագանակների հավաքը:

Ցանկալի չէ, տնտեսությունն հատկացված հողամասը շատ թեք չլինի, վորպեսզի թափված պտուղներն հավաքելու համար անհարմարություններ չստեղծվի:

Նման կտրումներից հետո աղատված պտղատու շագանակները պետք է մոտիկ ժամանակում մի քանի անգամ բարձրացնեն իրենց պտղաբերությունը. դրա հետ միասին կբարձրանան և պտուղների վորակը:

Անտառապտղային հողամասեր կազմակերպելու նման տեխնիկան պաշտպանում է անտառը շահագործելու ժամանակ լավ պտղատու շագանակների ծառերը կտրելուց և կտրելու դործն ուղղում է միայն այն ծառերի ուղղությամբ, վորոնք չեն ծառայում անտառապտղային խնդիրներին:

Այդ հնարավորություն կտա անտառապտղային տնտեսություն կազմակերպելու գեպքում յուրաքանչյուր հեկտարից ստանալ մինչև 200 խորանարդ մետր փայտամթերք, դրանց թվում նաև շագանակի:

Հետաքրքիր է, վոր անտառապտղային տնտեսություն մեջ շագանակի ծառերը, իրենց նեղացնող ծառերից աղատվելուց հետո, շնորհիվ լուսավորություն և առատություն և սնունդի լավացման, բացի պտղաբերություն ուժեղացումից, ցույց են տալիս հետո նույնպես և փայտամասի ուժեղ աճ բնի հաստանալով: Տարեկան շերտերը 2—3 անգամ լայն են դառնում, քան մինչև պտղային տնտեսություն կազմակերպելը:


Այդպիսով անտառապտղային տնտեսությունը շատացնում է վոչ միայն շագանակների բերքը, այլ և փայտամասի աճումը, ինչպես քանակությամբ, նույնպես և վորակով, վորովհետև այդ աճումը կենտրոնացած է ընտիր ծառերի վրա և բացի զբանից շագանակի լայնաշերտ փայտամասը վորակով ավելի բարձր է, քան մանրաշերտը:

Հետագայում, անտառապտղային տնտեսություն մեջ շագանակների զագաթների մեծացման հետ միասին մի քանի հետաֆնաց կամ թույլ պտղաբեր ծառեր առանց ընդհանուր բերքի քանակը պակասեցնելու կտրելի չէ կամաց-կամաց վերացնել և ոգտագործել նրանց փայտը:

Ապա, շագանակի անտառապտղային տնտեսություններում ծառերի բնական ցանցառանալու հետ միասին պետք է տնկվեն ընտիր աղնվացեղ ծառեր:

Այդպիսով շագանակային անտառապտղային տնտեսությունը կարող է կամաց-կամաց դառնալ անտառայգի, վորի մեջ պրտուղների վորակը և բերքատվությունը կլինի ել ավելի բարձր:

Անտառների կազմակերպման ժամանակ, շագանակի նման հողամասերը պետք է առանձնացվեն: Անտառապտղային տնտեսությունը, պահպանելով անտառը, վորպես թեքվածների պաշտպանություն, միաժամանակ հնարավորություն է տալիս նրանից ժողովրդական տնտեսություն համար առավելաղույն և ամենալավ ոգուտ ստանալու, ինչպես պտուղների, նույնպես փայտի վերաբերմամբ:



Г. 1936
Акт № 24
Вкладн. л.

ՀՀ Ազգային գրադարան



NL0301024

20.006

20.006